

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Տիգրան Վահեի Գաբրիելյանի «Բազմաչափանիշային տնտեսական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում (սպառողական վարկի օրինակով)» թեմայով Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը և նրա կապը գիտության ու տնտեսության համապատասխան բնագավառների հետ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի և տնտեսության համար չափազանց արդիական հիմնախնդրի՝ սպառողական վարկավորման շուկայում բազմաչափանիշային տնտեսական կարգավորման կառուցակարգերի մշակմանն ու կատարելագործմանը: Սպառողական վարկերի շուկայի ծավալները ՀՀ-ում արագորեն աճում են՝ ընդգրկելով բնակչության լայն զանգվածներ (2025թ. նոյեմբերի դրությամբ առկա է եղել շուրջ 910,000 վարկառու, որից ավելի քան 880,000-ը՝ ոչ հիպոթեքային):

Շուկայում գործող մի շարք ոչ բանկային վարկային կազմակերպություններ առաջարկում են չափազանց բարձր (ընդհուպ մինչև 460% տարեկան) տոկոսադրույքներով վարկեր, որոնք իրենց բնույթով նման են միջազգային պրակտիկայում հայտնի «payday» վարկերին: Նման վարկերի լայն տարածումը բնակչության ցածր կամ անկայուն եկամուտ ունեցող խմբերում հանգեցնում է գերվարկավորվածության և «պարտքային ծուղակի» առաջացմանը, ինչն իր հերթին խորացնում է աղքատությունը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տոկոսադրույքի առավելագույն կոշտ շեմերի սահմանումը հաճախ անարդյունավետ է կամ հանգեցնում է վարկերի հասանելիության կրճատման խոցելի խմբերի համար և ստվերային վարկավորման աճի: Հետևաբար, ՀՀ վարկային շուկայի էմպիրիկ տվյալների վրա հիմնված

բազմաչափանիշային կարգավորման մոդելի մշակումը սերտորեն կապված է տնտեսագիտության, տնտեսական կարգավորման տեսության, մակրոտնտեսական կայունության և սոցիալական քաղաքականության հետ:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել «պարտքային ծուղակ» երևույթը ՀՀ սպառողական վարկերի շուկայում և մշակել համապատասխան տնտեսական կարգավորման կառուցակարգեր, որոնք կպաշտպանեն սպառողներին նմանատիպ ծուղակներից, միաժամանակ չվնասելով ֆինանսապես խոցելի խավերին, չսահմանափակելով վարկերի հասանելիությունը: Այդ նպատակի իրականացման համար առաջադրվել է լուծել հետևյալ խնդիրները.

- Գնահատել ՀՀ-ում «պարտքային ծուղակ»-ի տարածվածությունը սպառողական վարկերից օգտվողների շրջանում:
- Բացահայտել «պարտքային ծուղակ»-ում գտնվողների ընդհանրությունները:
- Որոշել «պարտքային ծուղակ»-ում հայտնվելու հավանականության վրա ամենաշատ ազդող գործոնները և դրանց հնարավոր կարգավորման ուղիները:
- Վիճակագրորեն նշանակալի փոփոխություններ, որոնց թվում կարող են լինել վարկի պայմանները, վարկից օգտվելու նպատակը և որի հիման վրա մշակել ՀՀ վարկային շուկային համապատասխան արդյունավետ տնտեսական կարգավորման կառուցակարգ:
- Վերլուծել առաջարկվող կարգավորումների հնարավոր կողմնակի հետևանքները սպառողների և վարկատուների համար, ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման ինստիտուցիոնալ մոտեցումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտն է ՀՀ վարկային շուկայում բազմաչափանիշային տնտեսական կարգավորումը, իսկ առարկան՝ «պարտքային ծուղակ»-ում գտնվող սպառողները և նրանց ունեցած վարկերը:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, օգտագործված գրականության ցանկից և երկու հավելվածներից, ատենախոսությունը շարադրված է 120 էջերի վրա:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսական կարգավորման հիմքերը»** գլխում անդրադարձ է կատարվում տնտեսական կարգավորման էությանը և դրա հիմքում ընկած տեսություններին ու մեթոդաբանությանը, ինստիտուցիոնալ մոտեցմանը և սպառողական վարկերի շուկայում տնտեսական կարգավորման իրականացման հիմքերին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ռիսկային վարկերի և դրանց կարգավորման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում»** գլխում քննարկվում են ռիսկային վարկերը և «պարտքային ծուղակ»-ների վերաբերյալ միջազգային փորձը, վերլուծությունները, ինչպես նաև հեղինակի կողմից ատենախոսությունում առաջադրված խնդիրների որոշակի լուծումներ:

Ատենախոսության երրորդ՝ **«Պարտքային ծուղակ»-ի պատկերը ՀՀ-ում և սպառողական վարկերի տնտեսական կարգավորման կիրառումների կառուցակարգերը»** գլխում ներկայացվում են հեղինակի կողմից իրականացված սոցիալական հարցման արդյունքները և դրանց վերլուծությունը:

Հեղինակի կողմից ներկայացվում և վերլուծվում է միջազգային գրականության մեջ հայտնի «պարտքային ծուղակ» եզրույթի գործոնը և բերում է սեփական սահմանումը:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների, ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները, ձևակերպվել են հիմնական եզրահանգումները ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները: Հետազոտության արդյունքներն ունեն ոչ միայն տնտեսական,

այլ նաև գործնական արժեք, հնարավորություն տալով բարելավել «պարտքային ծուղակ»-ի մեջ գտնվողների սոցիալական և ֆինանսական իրավիճակը վարկային շուկայում: Գործնական և համեմատական վերլուծությամբ հիմնավորվել է, որ տոկոսադրույքի առավելագույն շեմի սահմանումը չպետք է լինի «պարտքային ծուղակ»-ի դեմ հիմնական գործիքը, քանի որ այն կհանգեցնի վարկերի հասանելիության կրճատման, հատկապես ֆինանսապես ավելի խոցելի վարկառուների համար:

Հետազոտության ստացված արդյունքների, եզրակացությունների և առաջարկությունների գիտական նորույթը

Ատենախոսության մեջ ստացված հիմնական արդյունքներն ու առաջարկություններն ունեն ակնհայտ գիտական նորույթ, որը դրսևորվում է հետևյալում.

1. Մշակվել է Հայաստանի համար «պարտքային ծուղակ» հասկացության համակցված սահմանում, որի հիման վրա վերլուծվել են ՀՀ սպառողական վարկերի շուկայի տվյալները: Սահմանումը պահանջում է երկու պայմանի միաժամանակյա առկայություն՝ վարկը մարելու կառուցվածքային անկարողություն (ամսական մարումը գերազանցում է հայեցողական եկամուտը) և կրկնվող վերաֆինանսավորում (երեք և ավելի երկարաձգում): Հենվելով միջազգային փորձի վրա, այս սահմանումը թույլ է տալիս առանձնացնել պարտքային ծուղակը ժամանակավոր ֆինանսական դժվարություններից և չափել դրա տարածվածությունը ՀՀ-ում:

2. Հեղինակի կողմից կազմակերպված հարցման և լոգիստիկ ռեգրեսիոն վերլուծության հիման վրա բացահայտվել են «պարտքային ծուղակ»-ում 10 հայտնվելու վրա ազդող գործոնները՝ ընտանիքի չափը (ամենաուժեղը), վարկի տոկոսադրույքը և մարման ժամկետը, ընդ որում վերջին երկուսը գործում են ամսական մարման բեռի միջոցով: Ցույց է տրվել նաև, որ պարտքային խոցելիությունն անհամաչափորեն է կենտրոնացած ոչ բանկային վարկավորման հատվածում:

3. Մշակվել է սպառողական վարկերի բազմաչափանիշային տնտեսական կարգավորման կառուցակարգ, որի առանցքը վարկի մատչելիության պարտադիր գնահատումն է. վարկատուն պարտավոր է իրականացնել և փաստաթղթավորել այդ գնահատումը և պատասխանատվություն է կրում, եթե գնահատումը պատշաճ կերպով իրականացված չէ: Ի տարբերություն ՀՀ-ում գործող ՊԵՀ կարգավորման, առաջարկվող մոդելը հաշվարկում է մատչելիությունը հայեցողական եկամտի հիման վրա, և մոդելը լրացված է նաև վարկի նպատակով պայմանավորված խստության տարբերակմամբ: Գնահատման շեմը սահմանվել է հայաստանյան հարցման տվյալների վերլուծության հիման վրա, իսկ կառուցակարգի ընդհանուր մոտեցումը՝ վարկատուի պատասխանատվությամբ մատչելիության պարտադիր գնահատումը, համահունչ է Եվրոպական միության (CCD2) և Մեծ Բրիտանիայի (FCA CONC) կարգավորման մոտեցումներին:

4. Էմպիրիկ և համեմատական վերլուծությամբ հիմնավորվել է, որ տոկոսադրույքի առավելագույն շեմի սահմանումը չպետք է լինի պարտքային ծուղակների դեմ պայքարի հիմնական գործիքը, քանի որ այն կհանգեցնի վարկերի հասանելիության կրճատման՝ հատկապես ֆինանսապես առավել խոցելի վարկառուների համար:

Ատենախոսության հեղինակի կողմից ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը

Տեսական նշանակությունը. Ատենախոսությունն առաջին անգամ համակողմանիորեն լուսաբանում է ՀՀ-ում «պարտքային ծուղակի» երևույթը, դրա ձևավորման մեխանիզմները, ոիսկի գործոններն ու առանձնահատկությունները: Այն հարստացնում է տնտեսական կարգավորման տեսությունը և հանրային շահի տեսության կիրառական հայեցակարգերը զարգացող տնտեսությունների վարկային շուկաների համատեքստում:

Գործնական նշանակությունը. Աշխատանքում մշակված բազմաչափանիշային կարգավորման կառուցակարգը և էմպիրիկ վերլուծության արդյունքները կարող են ուղղակիորեն կիրառվել պետական կարգավորող մարմինների կողմից սպառողական

վարկավորման ոլորտում քաղաքականություն մշակելու, գերվարկավորվածությունը կանխարգելելու և սպառողների շահերը պաշտպանելու համար:

Ատենախոսության արդյունքների և եզրակացությունների կիրառելիության հնարավորությունները

Ատենախոսության արդյունքները, եզրակացությունները և առաջարկությունները նպատակահարմար է ներդնել հետևյալ կազմակերպություններում և պետական մարմիններում.

- ՀՀ Կենտրոնական բանկ. Վարկերի մատչելիության պարտադիր գնահատման մեթոդաբանության ներդրման, պարտքի և եկամտի հարաբերակցության կարգավորիչ շեմերի բարելավման և ոչ բանկային վարկային կազմակերպությունների վերահսկողական կառուցակարգերի խստացման նպատակով:
- ՀՀ Ազգային ժողով (Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով). «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենսդրական ակտերում պատասխանատու վարկավորման և սպառողների պաշտպանության վերաբերյալ դրույթների լրամշակման նպատակով:
- ՀՀ Էկոնոմիկայի և ՀՀ Ֆինանսների նախարարություն. Աղքատության կրճատման, տնային տնտեսությունների ֆինանսական կայունության բարձրացման և սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունների մշակման համատեքստում:
- Հայաստանի բանկերի և Վարկային կազմակերպությունների միություն. Ֆինանսական ինստիտուտների կողմից պատասխանատու վարկավորման էթիկական և գործառնական կանոնակարգերի մշակման ու կիրառման համար:

Գիտական կազմակերպություններ, որտեղ կարելի է շարունակել ու զարգացնել համապատասխան հետազոտությունները

Ատենախոսությունում արծարծված հիմնախնդիրների հետագա խորացումը և զարգացումը նպատակահարմար է իրականացնել հետևյալ գիտական և ուսումնական կազմակերպություններում.

- Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)՝ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում, մասնավորապես Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման և Ֆինանսահաշվային ամբիոններում:
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում և համապատասխան ֆակուլտետներում:
- ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ՝ ֆինանսական շուկաների և տնտեսական կարգավորման հետազոտությունների շրջանակներում:
- Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան՝ Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտում:

Դիտողություններ և առաջարկություններ

- Ատենախոսությունում հիմնավորվում է, որ տոկոսադրույքի առավելագույն շեմի կոշտ սահմանումը չպետք է լինի պարտքային ծուղակների դեմ պայքարի հիմնական գործիք, քանի որ այն կարող է սահմանափակել վարկերի հասանելիությունը խոցելի խավերի համար: Այդուհանդերձ, միջազգային փորձում լայնորեն կիրառվում են ոչ միայն կոշտ (անվանական), այլև «ճկուն» կամ «հիբրիդային» շեմեր (օրինակ՝ շուկայական միջին կշռված տոկոսադրույքի նկատմամբ լողացող հավելավճարի սահմանում): Աշխատանքում ավելի խորությամբ կարող էր վերլուծվել նման ճկուն շեմերի և առաջարկվող մատչելիության գնահատման մոդելի համադրման հնարավորությունը ՀՀ ոչ բանկային ֆինանսական հատվածի համար:

- Գիտական նորույթ հանդիսացող կարգավորման կառուցակարգում առաջարկվում է վարկի մատչելիությունը գնահատել հայեցողական եկամտի հիման վրա: Հայաստանի Հանրապետության տնտեսության պայմաններում, որտեղ առկա են չգրանցված աշխատանվարձեր, մասնավոր տրանսֆերտներ կամ ինքնազբաղվածությունից ստացվող կանխիկ եկամուտներ, հայեցողական եկամտի պաշտոնական փաստաթղթավորման խիստ պահանջը կարող է հանգեցնել վարկառուների մի ողջ հատվածի անհիմն դուրսմղմանը ֆորմալ վարկային համակարգից: Աշխատանքում խորությամբ ներկայացված չէ այն կառուցակարգը, թե ինչպես պետք է վարկատուները գնահատեն նման ոչ ֆորմալ, սակայն կանոնավոր եկամուտները:
- Որպես առաջարկ կարելի է դիտարկել վարկի մատչելիության գնահատման կառուցակարգի տարբերակման սահմանումը ըստ վարկի չափի և ժամկետայնության: Փոքր ծավալի և կարճաժամկետ վարկերի համար կիրառել հայեցողական եկամտի գնահատման պարզեցված թվային ընթացակարգեր (օրինակ՝ վարկային բյուրոյի և էլեկտրոնային համակարգերի ավտոմատացված տվյալների հիման վրա), որպեսզի գործարքային ծախսերը չբարձրանան :
- Ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող կամ տրանսֆերտներից կախվածություն ունեցող վարկառուների համար առաջարկվող մոդելում կարելի է ներդնել վճարունակության անուղղակի գնահատման չափանիշներ (օրինակ՝ կոմունալ վճարումների պատմություն, բանկային հաշիվների շրջանառություն), ինչը թույլ կտա կանխել ֆինանսական ներառականության նվազումը:
- Առաջարկվող կարգավորման կառուցակարգի ներդրումից հետո նախատեսել հետընթաց գնահատման հստակ ժամանակացույց, որպեսզի էմպիրիկորեն չափվի՝ արդյոք նոր կարգավորումը չի հանգեցրել ստվերային կամ ոչ ֆորմալ վարկավորման շուկայի ընդլայնմանը:

Եզրակացություն

Վերոնշյալ դիտողությունները ունեն խրախուսական բնույթ և բացասաբար չեն ազդում հետազոտության արդյունքների վրա: Տիգրան Վահեի Գաբրիելյանի

ատենախոսությունը ունի տեսամեթոդական և գիտագործնական նշանակություն, ինքնուրույն հետազոտական աշխատանք է, որի շրջանակներում հեղինակը լուծել է ատենախոսությունում դրված խնդիրները:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Տիգրան Վահեի Գաբրիելյանի «Բազմաչափանիշային տնտեսական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում (սպառողական վարկի օրինակով)» թեմայով ատենախոսությունը ամբողջությամբ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳՏ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ Տիգրան Վահեի Գաբրիելյանը արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսագիտություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Տ.գ.թ Ն. Յ. Կոստանյան



Նարեկ Յուրիկի Կոստանյանի

ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն. Դարբինյան



11 օգոստոս 2026թ.

